

تَنْبِيْهُنَّ

مَحَلَّة جَمْعِيَّة الْقَاهِرَةِ الْخَيْرِيَّة الْأَزْمِينِيَّة الْعَامَّة

# ՏԵՉԵԿԱՏՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԱՆՏՐՈՒՄ Հ.Բ.ԸՄՈՒԹԵԱՆ

المدير المسئول ا. صاروخان - ١٥ شارع عماد الدين - تليفون ٥٥٦٣٦ - صندوق بريد ٧١٧ القاهرة

Զ. ՏԱՐԻ

Թ Ի Ի 6

Հ Ո Կ Տ Ե Մ Բ Ե Բ 1962

## Ո՞ՒՐ ԿԸ ԿԱՅԱՆԱՅ Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՈՅԺԸ

Աշխարհացրիւ Հայութիւնը բարեսիրական բազմաթիւ միութիւններ ունեցած է եւ ունի այսօր ալ, բայց անոնցմէ եւ ոչ մէկը հասած է այն բարձրութեան, որ Բարեգործականին է:

Ապրիլ 15, 1906ին, Ս. Յարութեան տօնին օրը, Գահիրէի մէջ հիմը դրուեցաւ Հ. Բ. Ը. Միութեան. Պօղոս Նուպար եւ իր գաղափարակիցները այդ երկիցս նուիրական օրն իսկ արդէն անխախտ հաւատքն ունէին որ իրենց հիմնադրած Միութիւնը կոչուած էր բարերար դեր մը կատարելու հայ էբականութեան մէջ: Ծրագիրը, գոր մշակեցին անոնք, ազգային ու բարեսիրական նախնականութեան կը բխէր: Բայց ո՞ր մէկ միութեան ծրագիրը, ըստ երեւոյթին, վեհ նպատակներու հանդիսարան մը չէ միթէ:

Իսկանը, ուրեմն, այլուր փնտռելու է: Եթէ Բարեգործականը, իր գոյութեան յետունելեց տարիներու ընթացքին, յարաճուն վերելքի մէջ եղած է, բազմապատկելով իր անդամներուն թիւը եւ ընդարձակելով իր գործունէութեան դաշտը, եթէ ան հետզհետէ աւելի խոշոր դրամագլուխ մը ունեցած է իր տրամադրութեան տակ, այդ

բոլորը, ինչպէս կարգ մը խոշորափելի իրողութիւններ կ'ապացուցանեն որ Հայութեան մեծագոյն այս բարեսիրական կազմակերպութիւնն ունի թափուն եւ անսպառ ոյժ մը:

Այդ մշտանորոգ ոյժին գաղտնիքը նախ եւ առաջ փնտռելու է այն իրողութեան մէջ որ՝ Հ. Բ. Ը. Միութեան աւելի քան կէս դարու պատմութիւնը մէկ կարագատ ընդօրինակութիւնն է այդ ժամանակի Հայուն պատմութեան: Կէս դարու ընթացքին, Հայուն անցաւ երեք իրերայաջորդ հանգրուաններէ. սեր օրերուն յաջորդեցին սպիացումի եւ դարմանումի օրերը, որոնք ցամաքայացին ազգային վերելքի ներկայ լուսափայլ իրականութեան առջիկ:

Երբ քրքիւկան հարստահարութիւնները կազմակերպողները կը հետապնդէին սաղայելական յետին միտք մը — հայ ցեղն ամբողջ բնաջինջ ընելու հրէշային դաւադրութիւնը — Հայեր բռնեցին տարագրութեան ցամաքն, անապատներ կտրեցին, նորանոր խժոժութեանց մնայուն սպառնալիքին ենթակայ: Այդ ահաւոր ջարդերն եւ այդ առթիւ յառաջացած մղձաւանջային մթնոլորտը մեր ազգային աղէտը կ'ապացուցին անբեւակայելի համեմատութիւններու: Բարեգործականը, այդ մութ ու մոռնալ օրերուն, պահապան հրեշտակի մը նման, իր թերերը տարածեց Հայուն բեկորներուն վրայ, գա-

նոնք ստոյգ մահէ եւ ամբողջական կորուստէ փրկելու նուիրական առաքելութեամբ :

Երբ քշմամուրիւնները վերջ գտան, Հայերն անապաստան դժբախտներ դարձած էին. որբանոցներ, գաղթակայաններ, դարմանատուններ բարձրացան Բարեգործակոնի բարոյական ու նիւթական ձեռնտուութեան շնորհիւ : Այդ ատեն, տառապեկոծ Հայութիւնը, իր ստացած ծանր վերքերը սպիացնելու մասին կը մտածէր եւ Բարեգործականը դարձնէր ներկայ էր, բարեկամութեան եւ օգնութեան ձեռք կարկառելու ամոր, ապրելու համար սնունդ տալու եւ ցուրտէն պաշտպանող երգիկ եւ հագուստ հայքայքելու վեհ նպատակներով :

Վերապրումի նիգերն ունայն չանցան բարեբախտաբար : Վերապրողները բուժուեցան : Որքերը մեծցան, հայր դարձան . որբուհիներն ալ՝ մայր եւ իրենց գաւակներն որբ չեղան այլեւս, քանի որ ապրեցան իրենք... : Եւ երբ Հայը կրցաւ գլուխը դարձնել վերցնել, հայրենաշինակեան ծրագիրներ ուրուագծուեցան անոր աչքին : Բարեգործականը ազդու միջոց մը եղաւ Հայուն այդ բազմամեներն իրագործող — Նուպարաշէնը բարձրացաւ հայրենի հողին վրայ :

Հայրենաշինութեան առընթեր, հայրենադարձն ու դպրոցաշինութիւնը դարձան Հ. Բ. Ը. Միութեան նոր նպատակները :

Այսպէսով, ժամանակին հետ, տարագիր Հայութեան սփոփարար Բարեգործականը դարձաւ որբախնամ, ի վերջոյ վերածուելու համար առաւելարար կրթարարաց կազմակերպութեան մը, հայ մշակոյթի պահպանման ու տարածման ձգտող մեծ նպատակներով :

Մէկ խօսքով՝ Հայուն ազգային պահանջները փոխուելով, փոխուեցան նաեւ Բարեգործականի գործունէութեան բնոյթն ու տարողութիւնը եւ տեսա այդ աստիճանական բարեփոխութեան մէջ կը կայնացան անոր ոյժին գաղտնիքը :

Հ. Բ. Ը. Միութեան ոյժին գաղտնիքը պէտք է փնտռել նաեւ այն իրողութեան մէջ որ անոր ղեկավարները միշտ ալ ունեցան

ազգային եւ եկեղեցական առողջ ուղղութիւն, գոր անշեղ կերպով հետապնդեցին : Հիմնադիր Պօղոս Նուպարէն մինչեւ այժմու նախագահ Ալեք Մանուկեանը, Բարեգործականը միշտ ալ ունեցած է արժանաւոր նախագահներ, որոնք Միութեան գործունէութեան բնոյթն ու տարողութիւնը՝ բարեփոխունող ազգային պահանջներուն պատշաճեցուցած ժամանակ, անշեղ ու անփոփոխ պահած են անոր ազգային ուղղութիւնը :

Մեծանուն բարերարներ եւ անանուն ազգայիններ, բոլորուելով Բարեգործականի շուրջ, ոգի ի բոխն ծառայելով անոր ազգային բարեսիրական, կրթական ու մշակութային նպատակներուն, քար առ քար կերտեցին զայն տարիներու ընթացքին, ստեղծելով կոթողային գեղեցկութեամբ այս կազմակերպութիւնը, որ իբր մշակոյթի անշեղ օճախ եւ անմար փարոս, լո՛յս, միշտ աւելի՛ լոյս պիտի սփռէ տարասփիւռ լուսատենչ Հայերուն :

Ապրելով Հայ ժողովուրդին հետ եւ Հայ ժողովուրդին համար, Բարեգործականը, շնորհիւ իր անշահախնդիր եւ բոլորամուէր ղեկավարներուն, պիտի մնայ սյն բարձր պատուանդանին վրայ, ուրկէ ո՛չ ոք պիտի կրնայ վար առնել զայն եւ ո՛չ ցեխ, ոչ մրուր պիտի հասնին անոր նակատին :

Հայ ժողովուրդին ծոցէն ծնունդ առած այս մեծ կազմակերպութիւնը, իր ազգաշէն գործունէութեամբ, կը վերադարձէ Հայ ժողովուրդին ինչ որ կ'առնէ անկէ - կեանք, լոյս, ոյժ եւ գեղեցկութիւն : 61

Տոբ . Ն . ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՄԻՈՒԹԻՒՆԸ ԶՕՐՈՒԹԻՒՆ Է

Եթէ տկար ես, միութիւն փնտռէ գորակալու համար .

Եթէ հզօր ես, միութիւն փնտռէ չտկարանալու համար :

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Իմաստութիւնը մեծ պատեհութիւնները լաւագոյն կերպով գործածելու արուեստն է :

### Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ

Մեծ ուրախութեամբ ստացանք ԲԱՐ - ԶՈՒՆՔԻ Ե. տարուան հերթական հատորը՝ 178 էջ։ Ասիկա պարբերական հրատարակուած թերթն է Հ.Բ.Ը. Միութեան Լ. ՆԱԶԱՐԵԱՆ - ԵԱՆ - Գ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ Կեդրոնական վարժարանին, խմբադրութեամբ Հրայր Պարբերականին (ընդհ. վարիչ), Գէորգ Անտոնեանին, Լեւոն Զէնեանին եւ Յովսէփ Ուղունեանին։ Ուսյս հատորը նուիրուած է բովանդակ հայ դարերու առաջին տուրքից եւ հայ տառերու ստեղծիչ Սուրբ Մաշտոցի ծննդեան «1600ամեակի ազամանդեայ Յորեկեանին»։

Կը թղթատենք զիրքը, դողդոջուն մատներով ու կը կարգանք դրութիւններուն տակ հայու հպարտաւիր ձեռներ, վաքրիկ ծանօթադրութիւններով, - աշակերտ Երկրորդի, Գ.էն, Միջնակարգի Ա.էն, նախի Զ. Գասարանէն։ Զափազանցած չեմ ըլլար, եթէ ըսեմ որ այս դրութիւնները, բոլորն ալ աւխտիր, խմբադրուած են Հայրենիով մը, որուն չեն հասած հրապարակի վրայ արդէն որակեալ զբոյլի անուն ունեցող շատ մը մարդիկ։ Գաղափարներով, արտաբանութեամբ եւ հորելոնով քիչ անպակ հասած բարձրագոյնին, այս դրութիւնները, ընդունին ետք, կը բովանդակեն ՈԳԻ մը, մարդկային եւ ազգային շահանքով, որ անոց է, շինարար եւ բարձրաթուիչ։ Կեանքին հանդէպ լաւ տրամադրուած ու զօտեւորուած, մարդոց հանդէպ՝ այսպէս ըսուած՝ աստուածահաճոյ վեցուածքով, ապա հայոց եւ հայ արժէքներու հանդէպ գուրդուրանքով ու նախանձախնդրութեամբ առցուն այս սերունդը չի կրնար մեզ անտարրեր թողուր։ Ու մեր շուրջը կազմաւորուող, տարբարուող իրականութիւններու ցաւը կը հաւատարակուի մեծ ըստփանքով։ Հայ նոր սերունդը, զաղուցահայութեան այս աճուն մէջ, իր ազգին եւ հայրենիքին սրտու բերող՝ զբուս ու կամքի տէր, զիտակից ու զապափօյնապաշտ սերունդ մըն է այլեւս։ Եւ ուրախայի է որ ս-

նոր գլխուն վերեւ Հ.Բ.Ը. Միութեան դրօշն է որ կը ծածանի։

Հալէպի ԼԱԶԱՐ ՆԱԶԱՐԵԱՆ — ԳԱ - ԼՈՒՍ ՀԻՒԼՊԷՆԿԵԱՆ Կեդր. վարժարանը հիմնուած է 1954ին միայն 84 աշակերտներով, իբրեւ մանկապարտէզ եւ նախակրթարան, անորէն ունենալով բանաստեղծ Լեւոն Վարդանը, որուն յաջորդած է մեծը Ռուբէն Պօղոսեանը։ Իսկ 1956էն ի վեր անորէնի պաշտօնը վստահուած է Երուանդ Ալիշեանին, երիտասարդ եւ համալսարանաւարտ կարող մտաւորական մը։ Այս վարժարանը այժմ ունի 800 աշակերտ։ Պիւտճէն է 140.000 Սուրիական սակի, որուն միայն հարիւր հազարը կը զոյսանայ աշակերտներու վարձքերէն, իսկ մնացեալը կը հոգացուի Հ.Բ.Ը. Միութեանէն։ Յիտուններք է ուսուցիչներու թիւը, մեծ մասամբ վկայուած հասակաւ լիարժեք եւ երկրորդական վարժարաններէ, նուիրեալ եւ դաղափարական անձինք,

Աշակերտութեան ութսուն առ հարիւրը ցարդ յաջողութիւն ձեռք բերած է ՊՐԻՎԼԻՒՄ քննութեանց մէջ. բայց այս տարի ընթացաւարտները պիտի ներկայանային, ներկայացած են անշուշտ ՊԱՔԱՆՈՐԷԱՅԻ պետական քննութեանց։ Այս վարժարանին շրջանաւարտները կ'ընդունուին Դամասկոսի Համալսարանը եւ Պէյրութի Ամերիկեան համալսարանի ՍՈՖՈՍՈՐ դասարանը։

Դպրոցը օժտուած է գրադարանով որ ընթացիկ լեզուներով բազմահարիւր գիրքեր էր պարունակէ։ Կայ տարբարուածարան, արդիական կազմածներով։

Ուսումնական ծրագրին մէջ մասնաւոր տեղ տրուած է հայադիտական նիւթերուն։ Տարին մէկ անպակ կը հրատարակուի ԲԱՐ - ԶՈՒՆՔ պարբերականը՝ հսկողութեամբ վարժարանին հայոց լեզուի եւ դրակտեթեան ուսուցիչ, յայտնի դրող Հրայր Պարբերականին։

Վարժարանի աշակերտութիւնը կ'ունենայ թատերախումբ, երաժշտական եւ մարդական դործունէութիւն։ Մարդիչն է Լեւոն Արզարեանը։ 120 հոգիանոց երգչախումբը կը վարէ Անդրանիկ Կիրակոսեան։ Այս վարժարանի թատերախումբն է որ, սրտմտե-

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

# Հ Ա Յ Ե Ր Է Ն

... Եւ հաստատաբայլ, աստիճանէ աստիճան...  
 Ու պսակէ ի պսակ եւ լոյսէ ի լոյս,  
 Երբ գաւակ մը մտածումիդ,  
 Ես ի քեզ գամ, իմ այս երգը երգելու...

ԱՒԱՄԱՆԹՕ

Քե՛զ, հայ լեզու՛, կը սիրեմ մրգաստանի մը նման...

Վ.ԹԷՔԷՆԱՆ

Դու մեզ տուիր բանալին անմահութեան ու փառքի,  
 Նարեկացի մեզ տուիր, մինչեւ Չարեանց ու Սեւակ:  
 Դու մեզ տուիր մրգերի անմահական մի այգի,  
 Սիւն եղար մեր գոյութեան, եղար պատուար ու յենակ:

Ու պատմութիւնը մեր մեծ, պայծալոյս կամ մտայլ,  
 Մեր ինքնութիւնը տոկուն քո մեծ ուժով է յառնել,—  
 Նրանք պատուար են եղել, եղել գրահ ու խրամ՝  
 Երեսունվեց յազր սիւներ, երեսունվեց դիւցազներ:

Արդ, քեզ բիւր փառք ի բարձունս, հրամանատար մտքերի,  
 Տասնվեցդարեան մշուշից արդ կանգնել ես հայրօրէն  
 Քո վիթխարի հասակով, սքանչելի, անթերի,  
 Ու նայում ես գալիքին անվախ, ժպտո՛ւն, հայերէն...

Թեան մէջ առաջին անգամ ըլլալով ներկայացուցած է Յակոբ Պարոնեանի ՄԵԾԱՊԱՏԻԻ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ, արարելէն լեզուով, թարգմանութեամբ Նիղար Խալիլի, որ նոյնպէս թարգմանած է Յովհ. Շիրազի Սիրամանթօ եւ Խաչեղարէ պօչման:

Վահրամ Մարգարեանի տեղեկատուութեանը քաղուած այս մանրամասնութիւնները ամբողջական պիտի չըլլային, եթէ մոռնայինք որ վարժարանին շրջանավարտները, նոյնիսկ հեռու տեղեր պաշտօնի կոչուելէ ետք, կը մնան կապուած իրենց ընտի օճախին եւ անոր հովանաւոր-հողածու Հ. Բ.Ը. Միութեան, անոնք ամէն տեղ Հ. Բ.:

Ը.Մ.ի լաւագոյն կոմպոզիտորն են:  
 Բարձունքի այս թիւին մէջ կը հանդիպինք 45 անուններու, այլազան գրութեանց տակ. Կը յուսանք անոնցմէ շատերը օր մը ողջունել իրրեւ օժտեալ եւ նուիրեալ գրողներ կամ մտաւորական գործիչներ այլ եւ այլ մարզերու մէջ, որոնց յայնքան պէտք ունի մեր գրկուած զաղութահայ թիւեր:  
 Վեր առինք Հալիպի մերայնոց կառուցողական աշխատանքները, սնօղէնները ու սուցիչները եւ արժանաւոր երիտասարդութիւնը: Մեր սէրն ու խանդավառութիւնը իրենց հետ, ընդմիշտ:  
 ՀԱՅԿ ԺԱՄԿՈՉԵԱՆ,

ՎԱՂԱՐՇԱԿ ԼՈՐԵՆՑ

ՈՒՍՈՒՑԻՉ

Մեր ինֆնուրայն գոյութեան կուսանները երերուն  
 Երեսունվեց գամերով կեանքին ամուր գողեցիր.  
 Մին եւ կանթեղ տուեցիր դու հայ տանը, հայ մարդուն.  
 Բարբի՛, դու մեզ տուեցիր յաւերժելու ուղեգիր.  
 Ոգու զարթօնք եւ սնունդ, մտքի թռիչք մշտարթուն՝  
 Պապեմական յարկի տակ կամ աշխարհում ցանուցիր:

Մագաղաքը ամենից ամուր պարիսպն եղաւ մեր,  
 Այլ եւ փետուր- գրիչը՝ անկուտելի եւ յաղթ սուր...  
 Շարականի, աղօթքի մէջ չէ հանճարդ անավեր՝  
 Տառապանֆով քո երկնած կեանքի խորհուրդն է անսուտ.  
 Որ պահել է դարերով ժողովուրդին մեր անմեռ...  
 Ցարդ կաս եւ դո՛ւ, Ուսուցիչ, հանճարեղ այր՝ դարձած սուրբ:

ՀԱՅ ԿԵԱՆՔ

ԵՐԿՈՒ ՏԱՐԵԴԱՐՉ

1962ին լրացաւ հայ գիրերու գիւտին  
 1550ամեակը եւ հայերէն առաջին տպա-  
 գրուած գիրքի 450ամեակը:

Լուսաւորիչ, գիտնական Մեսրոպ Մաշ-  
 տոց մեր դարաշրջանի 412 թուականին  
 կազմեց հայերէն աբուրէճը, զոր հայ ժո-  
 դովուրդը կը գործածէ մեր օրերուն ալ:  
 Այս գիրերով, 1512ին, Հոռով մէջ հրատա-  
 րակուեցաւ Հայերէն տպագրուած առաջին  
 գիրքը:

Հայաստանի մէջ -

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ

ԾՆՆԴԵԱՆ 1600-ԱՄԵԱԿԸ

ՀԱՅ գիրերու ստեղծիչ եւ հայ ազգա-  
 յին դպրութեան հիմնադիր Մեսրոպ Մաշ-  
 տոցի ծննդեան 1600ամեակը մեծ հանդի-  
 սութեամբ ստուեցաւ Հայաստանի մէջ  
 Մայիս 26ին: Այս տոթիւ Մայիս 27ին Ե-  
 րեւանի Օփերայի մէջ տեղի ունեցաւ հան-  
 դիստաւր նիստ, հայ պետական վարիչներ -

րու, Ակադեմիայի եւ դամադան հիմնադր-  
 ներու ներկայացուցիչներու եւ արտասահ-  
 մանէն եկած հիւրերու ներկայութեան.  
 Վեհափառ Տ.Տ. Վաղդէն Ա. Կաթողիկոսի  
 յատկացուած էր յատուկ օթեակ:

Այս հանդիսութեանց մաս կազմեց յու-  
 շարձանին բացումը Օչականի մէջ, ուր կը  
 գտնուի Մ. Մեսրոպի գերեզմանը: Յուշար-  
 ձանը գործն է քանդակաւոր՝ Ն. Թորոս-  
 եանի: Ի պատիւ հայ գիրերու հնարիչին,  
 Երեւանի Պետական Մատենադարանը պիտի  
 կոչուի Մեսրոպ Մաշտոցի անունով:

Իրանս, Փարիզ. -

Յրանասահայ Մշակութային Միութիւնը  
 Պէյէյէլի սրահին մէջ կազմակերպած է յո-  
 լեւրնական հանդէս նուիրուած հայ գրերու  
 հանճարեղ ստեղծող Մեսրոպ Մաշտոցի  
 ծննդեան 1600ամեակին: Բացման խօսքը  
 ըսած է Ֆրանսահայ Մշակութային միու-  
 թեան նախագահ Գաբրիէլ ԿՍՆ -  
 ԶԱՏԵԱՆԸ: Իսկ բանասէր ՀՐԱՆՏ ԹՈՐՈՍ-  
 ԵԱՆԸ Հայ մեծ գիտնական եւ ուսուցիչ  
 ՄԱՅՏՈՅԻ կեանքը եւ գործը ներկայացու-



ցած է շահեկան բանախօսութեամբ մը: Դասախօսութեան ներկայ եղած են բազմաթիւ փարիզահայեր:

— Ֆրանսահայ Մշակութային Միութիւնը Փարիզի իր կեդրոնատեղիին մէջ կազմակերպել է հայ դիրքի վաճառա-ցոյահահագէտ: Յուցադրուած են բազմատեսակ հրատարակութիւններ՝ դեղատեստական, քաղաքական, դիտական դիրքեր եւ հանդէսներ:

— Հ.Բ.Ը. Միութեան Փարիզի Մասնաճիւղի վարչութիւնը, Տիկնանց Օթանդակը եւ Երիտասարդաց Ակումբը կազմակերպած էին, ԱէՆ դեաի թիւերուն վրայ շոգե-նաւով գիշերային պտոյտ մը, որ տեղի ունեցաւ 23 Յունիս շաբաթ գիշեր: 300 հոգիէ աւելի ազգայիններ փութացած էին վայելել այս հրաճելի ժամանցը, որ հայ երկնեռ երիտասարդութեան ներկայութեամբ խաւնդավառիչ հանգամանք մը ունէր:

Օդին դեղեցկութիւնն լալ նարատած էր այս բացառիկ հաւաքոյթին յաջողութեան, որուն բարոյական եւ նիւթական լաւագոյն արդիւնքը արդար վարձատրութիւնը եղաւ անոր կազմակերպիչներուն:

— Ֆրանսական շարժանկարի մեծ մըր ցանակը վերջերս շնորհուած է Դրնի դը Լա Պաթըլիէրի, «Թուրուքի համար, դաքսի մը Ֆիլմին» համար որուն պիտուր դերակատարն է երգիչ եւ շարժանկարի դերասան Ծարբ Ազնաւուր:

— Ֆրանսական ձայնասփիւռը վերջերս իր ունկնդիրներուն ներկայացուցած է ԵՂԻՇԻ ԶԱՐԵՆՅՆ ու ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆը: Այս հաղորդումին մաս կազմած են նաեւ երկու նահատակ բանաստեղծներու երկերուն հայերէն եւ Ֆրանսերէն արտասանութիւնները:

— Մայիս 20ի Երեքշաբթի օր «էքօլ Նորմալ ար Միւզիքի» մեծ սրահին մէջ Օրնաթալի Պատմահեան յաջողութեամբ պաշտպանեց իր «Թէզը» յանուանի երաժշտապետներէ բաղկացած ժիւրիի մը առջեւ: Իր նիւթն էր Հայ եկեղեցական երաժշտութիւնը որ կը ներկայացնէր մօտ 200

մեծագիր էջերէ բաղկացած եւ մեքենա-դրուած հատորով մը: Այս հատորը կը բացուի Տ.Տ. Վաղգէն Ա. Վեհափառ Հայրապետի պատկերով, եւ կը սկսի Հայոց Գրիտանէութեան դարձին հակիրճ պատմութեամբ: Մեր եկեղեցական երաժշտութեան խաղերուն կրած փոփոխութեանց միայն հետաքրքրական ուսումնասիրութիւն մըն է ապրը, բազմաթիւ ձայնանիչերու, օրինակներու եւ նօթադրուած եղանակներու տախտակներով: Քննիչ մարմինը Օր. Պատմահեանի «Թէզը» գտած է շահեկան, եւ յայտնած իր շնորհաւարութիւնները, միաժամանակ անոր հրատարակութիւնը յանձնարարելով Գ. Կիւլպէնիկեան Հիմնարկութեան:

Մարտէյլ —

— Մարտէյլի Հայ Երիտասարդաց Միութիւնը զործակցութեամբ ՍՈՍԻԷԹԷ ՍԻԱՆԹԻՖԻԿ ՖԼԱՄԱՐԻՈՆԻ տեղւոյն Առեւտրական սենեակի քննիչ բանուներու սրահին մէջ, Մեսրոպ Մաշտոցի ծննդեան 1600-ամեակի առթիւ կազմակերպած էր բանախօսութիւն մը, զոր կառարեց Ֆրանսերէնիկուով ախար Հրանդ Թորոսեան: Ներկայ էին բազմաթիւ Ֆրանսացիներ, մեծ մասով մտաւարականներ, լրագրողներ, Պ. Պալար՝ Գաիէ տիւ Սիւտի խմբագրատար եւայլն: Տխար Թորոսեան խօսեցաւ հայ դասական դրականութեան եւ հայ դերու ծագումին մասին, վեր հանելով այն թանկագին ծառայութիւնը՝ զոր Սահակ եւ Մեսրոպ կատարած են ի նպաստ հայ մշակութիւն եւ անտղղակի կերպով ստատարած ազգային անկախութեան: Հաւաքոյթը փակեց Սոսիէթէ Սիանթիֆիքի նախագահը որ հակիրճ բայ խօսատալից խօսքերով անդադարձաւ այն իրողութիւններուն ուսմը նոր էին Ֆրանսացի ունկնդիրներուն համար:

— Յակոբ Պարոնեանի ծննդեան 120-ամեակի առթիւ Ֆրանսահայ երիտասարդաց Միութեան Մարտէյլի մասնաճիւղի «ՄԱՍԻՍ» թատերախումբը լեւադպած է հայ մեծ երգիծաբանին ՇՈՂՈՒՌԹը: Թատերախումբը քաջաչերուած գտած բարոյական ընդունելութեան, ներկայացումը

պիտի կրկնէ Լիոն եւ Վալանս քաղաքներուն մէջ:

Ամերիկահայ Կեանք.—

— Գալիֆորնիոյ Թեմի Կիրակնօրեայ դպրոցներու տարեկան Դրդ Համաժողովը գումարուեցաւ Բիտլի Ս. Սահակ-Մեսրոպ Եկեղեցիին մէջ, նախազանգութեամբ Ա. ուսնորդ Սրբազան Հօր: Կարդացուած տեղեկապիտեան յայտնի եղաւ որ այժմ Գալիֆորնիոյ Թեմի Հայաստանեայց Եկեղեցի-ցիներու տասնեւմէկ Կիրակնօրեայ դպրոցներուն մէջ կ'ուսանին 860 աշակերտներ, եւ կ'ուսուցանեն 92 ուսուցիչներ, բոլորն ալ կամաւորապէս տալով իրենց ծառայութիւնը:

— ԿՈՄԻՏԱՍ Երզնախումբը իր երկրորդ երդահանդէսը տուաւ Մայիս 10ին Թատն Հոլի մէջ, նիւ Եորք, անպիսի մըն ալ հաստատելով իր համբաւը որպէս զբայուն մարդկային դործիք մը, հարգուելու հարց բնիկ երաժշտութեան ճաշակը եւ ուրիշ ունեկներ հասարակութեան: Երզնախումբը իմ քաղաքն էր Օնտիո Հէյուսն: Մենք դիտեցինք էին Տորոնթո Տէրաքեան՝ Ստիբանո եւ Վարուժան Ասլանեան՝ Թէնոր:

— ՀԱՅ ԿԻՐՈՒԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ 10ամեակը տօնակատարուած է հանդէսով մը Պէվլէրի Հիւթըն ՀՕԹԷԼԻՆ մէջ - Գալիֆորնիա - եւ որուն մասնակցած են 600 հիւրեր: Օրուան յայտադրին մաս կը կազմէին երգեր, ուղերձներ, պարեր, ինչպէս եւ վիճակահանութիւն մը, ի նպատ Հիմնադրութեան նպատակներուն:

Լիւիզն ՉՈՒԳԱՍԸԶԵԱՆ, յայտնի հայ Քօնթր-Ալթօ երգիչը, մըցումով յաջողեցաւ Մեթրոֆոնիթըն Օփերային երգիչներէն մէկը ըլլալ: Ան իր արժանիքը արդէն իսկ ցոյց տուած է իր ստանձնած բաժիններուն մէջ փայլուն յաջողութիւն ցոյցարեւելով:

ԱՐՁԱՆԱԳՈՐԾ Խորէն Տէր Յարութիւնեանը քանդակած է ԱՐԾԻԻ քանդակը որ ցուցադրուած է ՊՐԻԻՔՍԷԼԻ միջազգային

ցուցահանդէսին, արժանանալով զեղատէրներու գնահատանքին: Վերջերս աւարտած է երեք նոր գործեր որոնք հայկազանեւանդական պատմութիւնը կը կերպուորեն: Ասոնք փոքր չափի դործեր են կը կոչուին ԾՈՎԻՆԱՐ, ՍԱՆԱՍԱՐ, ԲԱՂԴԱՍԱՐ:

Նկարահանուիւ.—

Սալբի Մալեանի նկարներուն մէջ ցուցադրութիւնը տեղի ունեցաւ Ուոթըրթաունի Հ.Բ.Ը. Միութեան Տան սրահներուն մէջ: Յուլիանեայց 36 նկարներ, որոնք տարուէ տարի կը հաստատեն եւ կ'աւելցնեն նկարիչին պաշտօնուն համբաւը:

Ռումանիա, Պուրէշ.—

— Պուրէշի հայ թատերասէրները ՅԱԿՈՒ ՊԱՐՈՆԵԱՆ թատերախումբի անդամ Ասատուր Հայրապետեանի բեմական բազմամեայ դործունէութիւնը տօնակատարած են մեծ շուքով: 1957ին Ա. Հայրապետեանը Պուրէշի ժողովրդական խորհուրդի կողմէ պարգևատրուած է «Զանգուածներու համար մշակութային աշխատանքի ստանալու» շքանշանով:

— Պուրէշի Ստեփան Շահումեան Մըշակոյթի տան ՅԱԿՈՒ ՊԱՐՈՆԵԱՆ թատերախումբը ՄՈՒԼԻՆԻ Ազախը բեմադրելէ վերջ ներկայացուցած է նրա երկու հեղինակէն «Ակամայ բժիշկը» թատերախաղին բեմադրիչն է դերասան Թոնի Զաքարեանը:

— Ֆրանսական շարժանկարային լուսանկարիչ ԱՌԼԵՆ ՓԱՓԱԶԵԱՆը այցելած է Ռումանիա, չորս ֆիլմեր նկարահանելու Ֆրանսական թելեվիզիոնի հաշտոյն, որոնք պիտի պատկերացնեն ուսմէն մասնակներու կեանքը:

Առկն Փափաղեան յայտնի է իր բնավաւերադրային ֆիլմերու հեղինակ. ժամանակին աշխատակցած է տաղանդաւոր շարժանկարիչ Աշոտ Մալաքեանի մասնակցելով անոր երեք ֆիլմերու ստեղծմանը, որոնց դիվաւոր դերակատարը հաղխացած է սինեմայի հռչակաւոր դերասան ՖԵՐՆԱՆՏԷԼ:

# ԱՐՇԱԿ ԱԼՊՕՅԱՃԵԱՆ

Կորսնցուցիչնք մեր մեծագույն բանասէր պատմագէտներէն ԱՐՇԱԿ ԱԼՊՕՅԱՃԵԱՆԸ, 84 տարեկան ծերունազարդ հասակին մէջ, Կիրակի, 24 Յունիս 1962, երեկոյեան ժամը 7:30ին, Մաթարիոյ իր բնակարանին մէջ: Կորսնցուցիչնք այն պահուն, երբ ամենէն աւելի պէտք ունէինք իրեն:

Թղլուժը տեղի ունեցաւ ազգային յուզարկաւորութեամբ, Հելլիսպոլսոյ ազգային Ամենայն Սրբոց Գերեզմանատան մէջ, ՏԱՄԱՏԵԱՆԻ եւ ԹէֆէնԱՆԻ շիրիմներուն քով, Երեքշաբթի՝ 26 Յունիս: Համազգային Սուգ էր, որուն մասնակցեցան Հայաստանէն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ՎԱՋԳԷՆ Ա., Մշակոյթի եւ Բարեկամութեան Կապի Ընկերակցութեան Նախագահ Տիկ. Բ. Գրիգորեան, Ակադեմիայի Ինսթիթիւտներու տնօրէնները, Թանգարաններու, Մատենադարաններու եւ այլ հիմնարկներու անձնակազմը, Գրողներու Միութիւնը եւ բազմաթիւ մասնորակներ՝ հեռագիրներով:

Սիւրբաքէն՝ զպապարակիցներ, աչակերտներ, մասուլի ներկայացուցիչներ եւ անհատ ազգայիներ: Յնդարկաւորութեան ներկայ էին Ներգալթի Գահիրէի Լիազոր պատուիրակներ՝ Ա. Շաշինեան եւ Մ. Մելքումեան: Գամբանակամներ խօսեցան Գերաշնորհ Տէր Մամբէ Մ. Արք. Սիրունեան, (Յանուն Ազգային իշխանութեանց, որուն անդամն էր ողբացեալը եւ թեմաթիտնի Բ. Ատենապետ), Պր. Սահակ Թիւրապեան (Ռ.Ա.Կ.), Պր. Գր. Նիկողոսեան (Մ Դ. Հ. Կ.), Պր. Հայկազուն Քիւրքեան (Հ. Բ. Ը. Միութիւն) եւ Պր. Է. Կոտարլալեան (Արեւ Օրաթերթ):

Ո՛չ եւս է Հ. Բ. Ը. Մ. ի երիտապարգնետուն հայադիտական պաշար ջամբող նահապետը: Ո՛չ եւս է անխոնջ բանահաւար-բանասէրը: Բազմաթիւ դործեր, կիսաւարտ,

դատապարտուած եւ անշարժութեան, երկար տետնի համար, մինչեւ որ արժանաւոր եւ ձեռնահաս մը ձեռք տունէ անոր ընդարձակ նոթերը եւ շարունակէ գործը:

Ստորեւ կը հրատարակենք Գահիրէի Հ. Բ. Ը. Միութեան Ատենապետ Պր. Հայրապետ Քիւրքեանի դամբանականը, (միւս դամբանականները հրատարակուեցան առօրեայ մամուլին մէջ):

Հ. Ժ.

## ԿԱՂՆԻ ՄԸՆ ԱԼ ԻՆԿԱՒ... .

Գամբանակամ՝ խօսուած ողբացեալ ԱՐՇԱԿ ԱԼՊՕՅԱՃԵԱՆԻ դադալին առջեւ, Գահիրէի Հ. Բ. Ը. Միութեան տատենապետ Տիւր Հայկազուն Քիւրքեանի կողմէ:

Գաղութահայութեան վերջին կարեւորէն մէկն ալ տապալեցաւ յանձին մեր ամէնու սիրելի եւ անխոխարինելի Ալլոյթածեանին, որուն դադալին առջեւ կուգանք խոնարհիլ եւ մեր հուսկ քարգանքի խօսքը ըսել յանուն Գահիրէի Հ. Բ. Ը. Միութեան:

Ալլոյթածեան շատ կանուխէն Բարեգործականի կոչումին, առաքելութեան ու գերին պիտակցող Հայ մը եղած է եւ 1908-ին, Միութեան հիմնադրութեան առթիւ, Պոլիս հրատարակուող ԲիւիՉԱՆԴԻՈՆ լիթիթին մէջ խանդավառ բառերով ողջունած է մեր Միութեան կազմութիւնը: Հետեւողական իր խօսքին, Ալլոյթածեան իր գործն մասնակցութիւնը բերած է այն բոլոր աշխատանքներուն, որոնց համար հրաւէր ըտտացած է, սատարելով Կ. Պոլսոյ, Քոսթոլի եւ Սեւանիլի մեր որբանոցներուն, աշխատանոցներուն եւ գաղթականներուն, մասնակցելով անոնց վարչական, կրթական եւ մշակութային աշխատանքներուն: Եզրիպտոս հաստատուելէ վեցջն ալ, ողբացեալը շարունակած է իր գործունէութիւնը բարեգործականի ի նպաստ, իր թանկագին խորհուրդներով, գրական օժանդակութիւններով եւ բանախօսութիւններով: Միութեանս վարիչները, Միջին Արեւելքի մէջ թէ այլուր, յաճախ իրեն գիտած են օգտուելու համար իր կրթական փորձառութեան: Եւ Ալլոյթածեան երբեք սակար-



կած չէ իր աշխատակցութիւնը, եւ միշտ անըստհամարձակ, ծառայած է առանց նիւ - թական սկիւղալուծեան: Բարեգործականն ալ զիրացած է զնահատել իր բազմարժէք կարողութիւնները եւ սիրով ուղած է մեկե - նաս ըլլալ իր մէկէ աւելի հեղինակու - թեանց: Նախանցեալ տարի Ալպոյաճեան իր Գաղթականութեան Պատմութիւնը ուղած էր վերջացնել երրորդ հատորով: Բայց Միութեանն ընդհանուր տնօրէն Տիար Գրի - գոր Կիրակոսեան քաջալերելով վաստակա - ւոր հեղինակը, խոստացած էր Միութեան օժանդակութիւնը, եթէ նոյնիսկ ՏԱՍԸ հա - տոր պէտք ըլլար սպասելու համար առկա - ջադրուած աշխատանքը, ինչ որ մեծ դա - հունկիւթիւն պատճառած էր իրեն:

Գահիրէի Հ.Բ.Ը. Միութեան վարչու - թիւնն ալ կընչ ըրաւ իր թանկալին աշխա - տակցութեան, որդէսլիլ դատախօսէ մեր զպրոցական սերունդին ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ նիւթերու շուրջ:

Եւ Պր. Ալպոյաճեան, հակառակ բոլոր - մաղրոսը եւ ծանրաբեռնուած ըլլալուն, ան - հուն խանդավառութեամբ զբառախօսեց մեր նոր սերունդին, ըման չորս տարիներ ա - նընդհատ: Այս դատախօսութիւնները բար - մաղրուած մեր երկսեւ երիտասարդութեան տրամադրուած են, որոնք այսօր, ո՛չ մի - այն հայալիտական նիւթերու ճոխ շտեմպ - րան մը կը կապեն այլ եւ քաղցր յիշատակ մը՝ մեր վաստակաւոր դատախօսէն:

Ալպոյաճեանի զրական վաստակի մա - սին իր յարեկնական հանդիսութեանց առ - թիւ ամենուրեք խօսուեցաւ, ո՛չ միայն զազուրկներու լայլ եւ ՄԱՅՐ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ մէջ: Եւ տարակոյս չունինք թէ պիտի շա - րունակուի ուսումնասիրութիւնը իր ծա - ւալուն եւ բեղուն արատաբութեանց: Ինչ որ սակայն այս պահուս կ'ուզենք վեր առ - նել իր ազգային ուղղամիտ, անկաշառ եւ արի մտաւարականի եւ հայրենասէրի հրա - դամանքն է: Անվարան, ան միշտ քննադա - տեց մեր սուրային կեանքէն ներս նշմարած բոլոր թերութիւնները եւ նոյնիսկ իր մե - զազրկանքի խօսքը ուղղեց մեր երկրի վա - րիչներուն, որոնք ներգաղթի գործին ա -

## Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՂԱՆԳԻՍՏԸ

Ամէն տարի, Գահիրէի Հ.Բ.Ը. Միու - թիւնը, մեծարելու համար իր հանգուցեալ հիմնադիր, բարերար, վեթերան եւ պարզ անդամներուն թանկագին յիշատակը, հո - զեհանդատեան պաշտամունք կատարել կու տայ մայրաքաղաքիս հայկական երեք եկե - ղեցիներուն մէջ միաժամանակ: Այս պաշ - տամունքը կատարուեցաւ անցեալ 2 Յունիս 1962ին, Կիրակի օր: Հայաստանեայց Առա - քելական Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, պատարագեց Արժանաբաւիւ Տէր Պետրոս Քհնյ. Ֆէրէճեան: Առաջնորդ Սրբազան հայրը ներկայ էր Ս. պատարա - գին եւ իր քարոզին մէջ յիշատակեց Քեր մեծ Միութեան հիմնադիրները եւ անոնց դործը աւսուանացնողները եւ հրաւիրեց ներկայ բարեպաշտ ժողովուրդը, որ ազ - թէ անոնց բարի հողիներուն համար: Ս. Պատարագէն յետոյ տեղի ունեցան հողե - հանդատեան պաշտօն: Եկեղեցական արա - բողութեանց վերջնապէս յետոյ, վարչու - թեան ներկայացուցիչներ Տեաք Հ. Քիւրք ճեան, Տիգրան Պապիկեան եւ Հայկ Ժամ - կոչեան, ներկայացան Առաջնորդ Հօր եւ

սրբութեամբ կ'ուշանային, մինչ ժողո - վուրդը դուրսը առած կը մեկնէր անձամբ աշխարհներ... Եւ Ալպոյաճեան, մյամուլի էջերէն հրապարակ իջաւ այլապէս լով ամէն անոնք որ կը ծրարէին զազրկել հայրենի - քէն հեռու, դէպի օտար եւ անհրապոյր վայրեր, ուր դարանակալ կ'սպասէ մեր ժողովուրդին ուժացումն ու բնաջնջումը:

Ալպոյաճեան կը սոսկար անդործութե - նէ եւ կ'ուզէր շարունակ արտադրել. մե - ուս պատեճշին վրայ, դրիչը ձեռքին, եւ իր սիրած ու գնահատած կազմակերպու - թեանց կողքին մասնաւորաբար Հ.Բ.Ը. Միութեան, որ իր բազմահարիւր ան - զբամներով եւ երիտասարդական կուռ շար - քերով կը սզայ իր կորուստը:

Պիտի ջժողանք Քեզ, սիրելի Ալպո - յաճեան, եւ բու յիշատակը միշտ անթա - ուս պիտի պահենք:

չնորհակալութիւն յայտնեցին Ն. Սրբազ - նութեան :

Նոյն օրը, Հայ Կաթողիկէ Մայր եկեղեցիին մէջ, ժամը 10-ին պատարապէս Կաթողիկէ հայոց Առաջնորդ Արհիմանտիւ Ռափայէլ Եպս. Պայեան, որ յետ աւարտման Ս. Պատարազին, եւ շրջապատուած կրօնական դասէն, կատարեց հոգեհան - դրաստեան պաշտօնը մեր բազմաթիւ հայ կաթողիկէ հիմնադիր, բարերար, վեթե - բան եւ գործօն անդամներու հոգիներու ի հանդիստ: Պաշտամունքէն յետոյ Միու - թեան ներկայացուցիչները՝ Տեառք Հայկ Օհաննէսեան, Խ. Բէյրութեան եւ Յովսէփ Սրէնճեան, Առաջնորդարանի դահլիճին մէջ Գերապարծառ Հօր ներկայացուցին իրենց շնորհակալութիւնները, եւ այս պատեհու - թեամբ զրոյց ունեցան ընդհանրապէս Մի - ութեան գործունէութեան անհրաժեշտ - հաճոցքով լսեցին Նորին Արհիմանտու - թեան օգտաշատ թեկադրութիւնները, եւ անգամ մը եւս հաստատեցին որ, ինչպէս անցեալին, նոյնպէս եւ ներկային մեր Հայ Կաթողիկէ հարազատները իրենց սրտին մօտ օգտաշատ կազմակերպութիւն մը կը նկատեն Հ.Բ.Ը. Միութիւնը, որ եթէ իր հիմնադիրներուն անխտրակամ ոգիին հա - ւատարիմ մնայ, առաւել եւս արդիւնաւոր կերպով պիտի սիրէ իր բարեիքները Բեր ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ:

Եւ որովհետեւ իր հիմնադիրներու այդ անխտրակամ ոգին վառ կը մնայ անշէջ փարօսի մը նման, եւ կ'առաջնորդէ իր յա - րիչները, ապա ուրեմն, Միութիւնը պիտի շարունակէ իր հանրամուէր ծառայութիւն - ները ի սիրուռս աշխարհի:

Նոյն օրը Հայ Աւետարանական Ժողովական եկեղեցւոյ մէջ, պաշտա - մունքի ընթացքին խորիմաստ քարոզ մը խօսելով, Վերապատուելի Վահան Թութիկեան, վեր առաւ բարեկործու - թեան ոգին եւ իմաստը, եւ պատճառաւոր յիշատակը Հ.Բ.Ը. Միութեան ծառայած հիմնադիր, բարերար, վեթեբան եւ պարզ անդամներուն, որոնք առ յաւէտ բաժնուած

ՄՇԱԿՈՅԹԻ ԱՆՀԵՏԱՅԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ

ՄՐԻՈՒՅԻ ՄԱՅՐԱՊԵՏ ԳԱՔԱՅԵԱՆ

(1822—1889)

ՀԻՄՆԱԴԻՐ Կ. ՊՈԼՍՈՅ ԳԱԼՖԱՅԵԱՆ ՈՐԲԱՆՈՅԻ

Ասիկա՝ անուանի բանասերին յատկա - պէս «Տեղեկատու»ին համար գրած վերջին յօդուածն է:

Սրբուհի Մայրապետ Նշան Գալֆայ - եան ծնած է Գարթալ (Կ. Պոլիս) 1822 Փե - տրբուար 17ին: Աղջիկն էր Ձոբպաճի Նշան ազա Գալֆայեանի որ իր ծննդավայրին՝ Բալուխ մէջ ամեռու սէրը եւ համակրանքը շահած անձ մըն էր: Ունէր վեց զաւակներ, որոնց անդրանիկն էր Սրբուհի, որ հաղիւ 12 տարեկան էր, երբ իր հայրը կորսնցուց: Սայրը կ'որոշէ զինքն ամուսնացնել, սա - կայն ան կ'ընդդիմանայ:

1837ին, ժանտախտի մեծ համաճարա - կին կը վարակուի, բայց հրաշքով մահէ կ'ազատի: Մայրը կ'որոշէ իր աղջկան փա - փաքին ընդ առաջ Երթալ եւ թողուլ որ լիամուսնանայ:

Իրենց ունեցածը ծախելով կուզան Կ. Պոլսոյ մօտ Գարթալ գիւղը, նշանաւոր իր այգիներով, եւ հոն կը հաստատուին, հո - րեկորորդուոյն Աղաթօն Գրիգորի տունը, ուր 1840ին Սրբուհի առաջին հանդիսաւոր ուխտով կը հազուի Մայրապետութեան սեւ վերարկուն եւ կուսակցան քօղով կը ծածկէ իր զուտը, հաղիւ 18 տարեկան:

են մեզմէ, եւ հրաւիրեց ներկաները որ ա - զօթեն նաեւ այդ բարի եւ աղնիւ հոգիներ - բուն համար:

Միութեան ներկայացուցիչները՝ Պ.Պ. Ս. Շայճեան, Գր. Պատմաճեան, շնորհա - կաշուիւն յայտնեցին Վերապատուելի Թութիկեանի, որուն երկտաաարչական խանդավառութիւնը, քարոզչական տաղանդը եւ վարակիչ հայրենասիրութիւնը խո - բապէս տարւորեցին ներկայ աղւայիւնե - րը:

Ս.

Սրբուհի Մայրապետ կը սորվի զանազան ձեռագործներ — օյա, տիվալ, սրբմա — եւ ո՛չ միայն իր ընտանիքին նեցուկը կ'ըլլայ, այլ Կ. Պոլսոյ թաղերէն Սաս գիւղի մէջ տուն մըն լալ կը գնէ: Հոն կը մեռնի մայրը:

1850ին Սաս գիւղի մէջ արհեստանոց մը կը բանայ եւ կը ժողովէ երկսեռ աշակերտներ, որոնց եռանդով կը սորվեցնէ իր արհեստը: Իր աշակերտուհիները պարծանքով եւ հպարտութեամբ ինքզինքնին կը ներկայացնէին որպէս Սարթալցի մայրապետին աշակերտը: Սրբուհի մայրապետ Կ. Պոլսոյ մէջ թէ այլուր մեծ անուն կը շահի:

1868ին, Անվէրսի (Պելճիքա) Արուեստահանդէսին կը զրկէ մետաքսեայ կերպասի վրայ արեւելեան ճաշակով բանուած ոսկեթել եւ նրբարուեստ բարձ մը եւ վերմակ մը, որոնք գնահատուելով ձեռարուեստի առաջին կարգի պատուոյ վկայականով կը վարձատրուին:

Վեց անգամ Եզիպոսս եկած է յատուկ հրաւերովը Իպրահիմ եւ Իսմայիլ փաշաներու կառավարութեան ժամանակ, իշխանազուններու օժիտներու պատրաստութեան համար:

1858ին Եզիպոստէն Իտալիա վճանցնի, Եռուսթեան Գէորգ Պէյի կողմ հետ, եւ կայցելէ Նարոլի, Հոռոմ, Ֆիորէնցիայ եւ Միլանո: 1959ին երկու անգամ Երուսաղէմ ուխտի կ'երթայ, դարձին Աթէնք կը հրաւիրուի Յունաստանի թագուհիէն եւ անոր պալատական տիկիններուն յունական ճաշակով մտղէ օյալ եւ ձեռագործ զարդեր պատրաստելու համար: Յետոյ կը դառնայ Պոլիս: 1865ի Յունուարին Պոլիս կը վարակուի քոլերայի համաճարակէ, որ Միջագետքի եւ Արաբիոյ մէջ անթիւ եւ անհամար անձեր մահացնելէ ետք մտած էր Փոքրը Ասիա, ուր 35 օրուան մէջ ամէն կողմ մահ եւ աւեր տիրած էր. ապա վարակած էր նաեւ Պոլիսը: Երեք ամսուան մէջ Կ. Պոլիս հազարաւոր զոհեր կուտայ: 1865ի Սեպտեմբերի վերջերը քոլերան կը դադրի, սակայն կը մեռնի բազմաթիւ որբեր եւ ան-

տէր այրիներ եւ որգեղուրի ծնողներ:

Սասգիւղի բազմահայ գիւղին մէջ Լուտաճմիկ տեսարան կը պարզուի:

Կարապետ վարդապետ Շահապարեան որ հիւանդացած, Տ. Գէորգ Արծրունիի տունը կը գտնուէր, Վարժապետեան ներսէս Եպիսկոպոսի եւ Գէորգ քահանայ Արծրունիի ներկայութեան խորհուրդ կուտայ Սրբուհի մայրապետին, որ տէր կանգնի անպաշտպան աղջիկներու եւ զանոնք փրկէ:

Մայրապետը անձնուիրութեամբ կ'ուրտէ իր կարելին ընել եւ 15 օրուան մէջ 25-ն 10 տարեկան 17 անտերունջ որբ աղջիկներ կը ժողվէ եւ կը հաստատէ Գալֆոյսեան Որբանոցը (1866):

1871ին, սրբանոցը կը փոխադրուի Տաքէսեանց ընդարձակ տունը, ուր ինք մեծցած էր: Այս հաստատութիւնը մինչեւ այսօր կը շարունակուի եւ օգտաշատ զերկատարած է, սրբերուն մէկ մասը ամուսնացնելով եւ մասնաւանդ իրը վարժուհի աղջիկն ծառայութեան նուիրելով:

1871ին Սրբուհի Մայրապետ Ս. էջմիածին կ'երթայ եւ ներկայ կ'ըլլայ Ս. Միլոսի օրհնութեան: Մինչեւ 4 Յուլիս 1889, իր մահուան թուականը, Սրբուհի Մայրապետ զերմարդկային ճիւղերով, միացնուի, սունէ տուն շրջելով եւ հանդանակութիւն ընելով, մատակարարած է Որբանոցը: Մեռած ատեն, աղջիկն կտակած է Որբանոցը, անոր կարուածներն ու գոյքերը: Իր մարմինը թաղուած է հասարակութեան Մատրան մէջ. Որբանոցը ցարգ կը շարունակուի:

**ԱՐՇԱԿ ԱԼՊՅԱՃԵԱՆ**

Ծ. Խ. — Այս տարի Կ. Պոլսոյ Գալֆայեան Որբանոցը իր հիմնարկութեան 96-րդ տարեդարձը արժանաւորապէս տօնակատարած է: Սրբազան Պատրիարք Հայրը այս առթիւ հանդիսաւորապէս պատարագած եւ հոգեհանգստեան պաշտօն կատարած է յաւերժայիշատակ Սրբուհի Մայրապետ Գալֆայեանի հոգւոյն համար:

Ասիկա՝ անուանի բանասէրին յատկապէս «Տեղեկատու»ին համար գրած վերջին յօդուածն է:

ԳԱՀԻՐԷԻ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

# Ի ՊԱՏԻՒ ՄԵՐ ԶՐՋԱՆԱԿԱՐՏ ԱՆԳԱՄՆԵՐՈՒՆ

Գահիրէի Հ. Բ. Ը. Միութեան Երիտասարդաց Մշակութային Մարմինի խնդամ երկսեռ շրջանաւարտներու ի պատիւ անցեալ Յունիս Յին, Հ. Մ. Ը. Մ. — ՆՈՒՊԱՐԻ Մարդարանին մէջ կազմակերպուած էր պաղպաղակահանդան մը, որուն մասնակցեցան Երիտասարդացի անդամ-անդամուհիները եւ Միութեան Վարչական կազմը:

Հաւաքոյթը բացաւ Օր. Ովսաննա Գարտաշեան, որ հակիրճ խօսքերով ներկայացուց օրուան հաւաքոյթին իմաստը, եւ սկսաւ դործադրութեան գնել զեղարուեստական յնարակները, որուն իրենց շնորհալի մասնակցութիւնը բերած էին Օրբորդ Աստղիկ Կօճամանեան եւ Սարգիս Պալեան — Արտասանութիւն —, Օրբորդ Վերա Հացունի — մենեթը —, Տիար Սարգիս Գարակդօզեան — զուգերը —, Տիար Արմենակ Ա. րօեան — արօսէօն —:

Նուպարեան Վարժարանի բարեջան Տնօրէն եւ բաղամեայ դաստիարակ Տիար Տիգրան Պապիկեան իմաստալից բանախօսութեամբ մը բացատրեց ուսանողութեան զերը ժողովուրդի մը կեանքին մէջ եւ ծանրացաւ յայտ առթիւ Հայ նոր եւ դաստիարակուած սերունդին պարտականութեանց վրայ: Տիար Միքայէլ Ժամկոչեան կարգաց յանուն շրջանաւարտ ընկերներուն ուղերձ մը, որ կը հրատարակենք ստորեւ: Հաւաքոյթը փակեց Գահիրէի Հ. Բ. Ը. Միութեան անխոջ ատենապետ Տիար Հ. Բիւրքճեան: Ան, Բարեկործականի դաստիարակչական դործը դրուատելով՝ մաղթեց, որ մեր նոր սերունդը հաւատարիմ ճանակիրը հանդիսանալ Բարեկործակիչի բարոյած սիրտը եւ հղիւթութեան գաղափարներուն:

Յարգելի հովիտակներ

Պատիւ ունիմ խօսք առնելու յանուն արքայապետ շրջանաւարտներու եւ յատկապէս անուն Հ. Բ. Ը. Միութեան ուսանող

սերունդին:

Ես ալ շրջանաւարտ ըլլալով՝ շատ լուրջ հասկնամ ձեզի սմէն մէկուն զլացած ուրախութիւնը եւ ունեցած ինքնավստահութիւնը:

Երկար տարիներու աշխատանքէ, բուռնութենէ, քննութեանց յուզումներէ, սուսուցչի եւ ծնողի սաստիկ ետք՝ հասունք որոշ հանդրուան մը. շրջանաւարտ ենք, կրնա՞նք խորունկ շունչ մը առնել եւ ըսել դժնձակութեամբ. — Ահա՛ հասաւ վերջը. ա՞յս էր մեր նպատակը:

Բայց լա՛ւ մտածենք եւ տեսնենք թէ իսկապէս ա՞յս էր մեր նպատակը: Պարզ շրջանի մը վերջը հասնի՞լն էր:

Ո՛չ, ամենեւին, առիկա վերջ մըն է, բայց միեւնոյն ատեն սկիզբ մը դուռ մըն է բաղմաթիւ ուրիշ շրջաններու:

Ձեմ կարծեր որ մեր մէջ մէկը ըլլայ որ չմտածէ շարունակել իր դործը, ըլլայ բարձրագոյն ուսմանց հետեւելով, ըլլայ աշխատելու եւ ինքնիրեն ու մարդկութեան ծառայելով:

Երբ նախակրթարանի շրջանաւարտ էինք թերեւս բոլորս կամ մասնաւոր մեզի՞ ուսմանք կարծեցին թէ հասած են տեղ մը, որ ընկերութեան մէջ նկատի առնուելիք հանդրուան մըն է. կարծեցին թէ բուռնախնայափ պաշար եւ միջոցներ ունին հասկնալու եւ բացատրելու աշխարհին բովանդակութիւնը եւ կեանքի երեւոյթները: Եւ ահա հազիւ ոտք կոխած երկրորդական ուսման սեմին ու շիման մէջ մտած քիչ մը աւելի բարձր ուսումնական մակարդակի հետ՝ հաստատած են որ անհրաժեշտ է բարձրագոյն ուսումը, անսպիթաք կարենալ առաջնորդուելու համար կեանքի ուղիին մէջ: Երազներ շինած ենք. մեզի համար միջնա-կարգ ուսումը եւ անոր ստացումը բարձունքի մը նուաճումը թուած է. — նոր ճիւղերու, մանքերու, ինչո՞ւն չէ՛ նաեւ տքնաճան աշխատանքի եւ զրկանքի շինով այսօր երբ դրսւած ենք յայտարարուած արքայապետ մը կը նկատենք հորիզոնին, կը հաստատենք որ տակաւին կան յաղմաթիւ ուրիշ բարձունքներ, որոնց եւս նուաճումը



անհրաժեշտ է մեր մարդկային հանդամանքը եւ արժանաւորութիւնը լարդարացնելու համար :

Այս նոր բարձունքները լուսաւոր եւ միաժամանակ լուսարձակ բարձունքներ են, դիտութեան եւ արուեստի սարահարթներ, բայց անոնց պարունակած լույսը եւ անոնցմէ ցնցուղուող ճառագայթները առողջ ու կենարար պիտի չըլլային, եթէ չպարունակէին լարոյական ներքին հիւսկէններու ցանց մը, որ նիւթական անցաւոր արժէքը խելական եւ յուերժական արժէքի կը վերածէ :

Ըսինք, բարոյական շեշտը դնենք անոր վրայ : Ի՞նչ կը հասկնանք ատով :

Մեր պարտաւային, մարդ ըլլալէ ետք հայու մեր հանդամանքով՝ բարոյականի այդ հիմունքները կարելի է երեք բառերու մէջ պարփակել.— Մէր՝ մարդկութեան հանդէպ եւ հանդէպ հայրենիքին ու ազգին, ու անոր բոլոր նուիրականութիւններուն : Միւրքիւն՝ մարդկային ընտանիքի բոլոր անդամներուն, ինչպէս զրկեալ ժողովուրդի բոլոր խաւերուն միջեւ : Ապա՝ Աշխատանք. աշխատանք՝ զարգանալու, աշխատանք՝ նրբանալու, աշխատանք՝ արտազրելու համար :

Բաժնեցէք այս պայմանները իրարմէ եթէ կրնաք եւ պիտի տեսնէք որ անոր ենթակայ, այսինքն այդ բաժանումին ենթակայ եղող հաւաքականութիւնը կ'ըլլայ տխրեղծ, անկատար եւ անատակ՝ խաղալու իր դերը մարդկային ընկերութեան մէջ :

Սիրելի դաստիարակներ, սիրելի ծրնողներ եւ սիրելի պաշտպաններ նոր սերունդին, թոյլ տուէք իմ բոլոր հասակակիցներուս կողմէ՝ հաւաստիացնել ձեզ, որ մեղի չի պակսիր դիտակցութիւնը այն ուղիին որ կը բացուի մեր առջեւ եւ դիտակցութիւնը այն պարտականութեանց՝ դորս պէտք է կատարենք մեր մտաւորական եւ բարոյական իրականութիւնը կերտելու համար, որպէսզի ար մը կարենանք մեր կարգին մարդկութեան վերադարձնել այն ինչ որ ստացած ենք

# ԴՐՈՒԱԳ ՄԸ ՀԱՅՐ ԱԼԻՇԱՆԷՆ

Հայր Ղեւոնդ Ալիշանի մահուան 60-ամեակին նուիրուած «Բազմավէպ»ի անցած նոյեմ-Դեկտ. թիւին մէջ Հայր Վահան Յովհաննէսեան ունի յօդուած մը, ուր կը պատմուին հետաքրքրական դրուագներ նահապետի կեանքին : Հայր Վ. Յովհաննէսեան, որ անցեալ տարի այցելած էր Հայաստան եւ իր շատ շահեկան տպաւորութիւնները հրատարակուեցան այդպիսի դէպ ուսով մը կը պատմէ հետեւեալ տողերու մէջ.—

\* \* \*

Երբ այսօր իսկ բանսնք Միսական հրակայ հատորը, մարդ զարմանքով պիտի տեսնէ, հազարաւոր անուններ եւ արձանագրութիւններ, քարերը պատմութեամբ լուսարանուած, պատմութիւնը յուշարձաններու ճշգրտած : Յաճախ նոյնիսկ տեղացիներու յիշողութիւններէն սպասած հետացած, հողի մէջ թաղուած : Ինչ որ աստեղ Երեսնի մէջ դիտեալիս Յակոբ Անտեսանը՝ թէ իր մէկ ճամբորդութեան ընթացքին, Չանդեղուրի կողմերը կը հանդիպի ինձնըսուն տարեկան ծերունիի մը : Ծերունին երբ կը ըսէ թէ իր դիմացինը Վենետիկ սորված է, աչքերը փայլ կ'առնեն, շատ հին յիշատակ մը կ'արթնայ մտքին մէջ և կ'ըսէ .

— Ընկե՛ր, ասկից շատ տարիներ ա —

անկէ . եւ վերադարձնել շահով, տոկոսով :

Այս հանդիսաւոր պահուն մեր շնորհակալիքը յայտնելով մէկտեղ ձեզի, կը խորհրդենք որ շարունակէք չղրանալ մեղի ձեռք պաշտպանութիւնը : Անոր փոխարէն եւ ի վարձ ձեր զոհողութիւններուն, կը խոտանանք արժանաւոր մարդեր եւ մեզ ազգին վարկ ապահովող լաւ հայեր ըլլալ :

ՄԻԲԱՅԷԼ ԺԱԿՈՉԵԱՆ



ուջ, դեռ վառ երիտասարդ, եւ գնացի Սուրբ Ղազար, մեծ Նահապետին (ալիմքըն՝ Հայր Ալիշանի. Մ.Ս) աջն ու ոտքերը համբուրելու. նա ծանցաւ եւ իմ կօշիկներս համբուրեց, ասոնց վրայ հայրենի հող կայ՝ ըսելով: Յետոյ, ինձ հարցուց թէ Որտան դեռին վրայ, Տաթևէն վեր, հին կամուրջ մը կայ, տես՞ք ես:

— Հայր Սուրբ, քեզի մատաղ, աչքպէս կամուրջ չկայ մեր դեռին վրայ. ես սարերը չափեր եմ, հովիտներն իջել ելեր եմ եւ կամուրջ չեմ տեսած: Նա ինձ պատասխանեց, կայ գլուխս, կայ, ըս. չես պատած քու ծննդավայրդ, երբ վերադառնաս Ձանդկուր՝ բարձրացիր դեռին վեր, եւ պիտի գտնես այդ հին կամուրջը: Վերադարձայ զիւր, հարցայի սրտդնեբու եւ հովիտներու. ոչ ոք ծանօթ էր այդ կամուրջին: Ի՞նչ ըսեմ, ախպէր. Կացինը մէջքիս դրի եւ քանի մը ընկերներով բարձրացանք դեռն ի վեր, ուր թուփ կար՝ կըտրեցինք, ուր ժայռ կար՝ մազլցելով երանք, գեան երթալով կը նեղեար, պատասուկ բոյսեր ախուք ախուքի կապած էին: Կանաչ մթութիւն մը կար այդ խոր հովիտին մէջ: Ահա պատուաւորներու խիտ հանդուց մը, երկու ախերէն իրարու մէջ հիւսուած հաստ մալուխի պէս, ծածկած էին Որտանը, տակէն ջուրը կը հոսէր ու կարելի էր, ըսեմ, քալելով անցնիլ մէկ ափէն միւսը. էնքան խիտ ու հաստատուն էին այդ պատուաւորները: Կացինը դռնք եւ ջիզ ան ջիզ բաժնեցինք այդ բոյսերը. տակից կլամի հին կամուրջ, սրբատու քարերով շինուած: մի արձանագրութիւն կար վրէժ, մենք չկարողացանք կարդալ: Բա, ստեփ, էս ի՞նչ բան է. նա Վենետիկում կեցած, մեզնից աւելի լաւ գիտէր մեր աշխարհի բաները: Մէկ հատիկ չէ ծերունին, ոչ երած եւ Ալիշանին ոտքն համբուրած է, եւ կրթուած կամուրջի մը անունով չափած անոր հմտութիւնը: Նոյն բանը կ'ըսէին ինձ Հայաստանի դիտնականները՝ թէ ո՛ր յուշարձանին մօտեմանք, Ալիշան գայն կար ծես տեսած, հաւրուրած ու հրատարակած է արձանագրութիւնը:

## ՏԻԳՐԱՆ ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ

Յունիս 15ի Ուրբաթ առաւօտ, անա-կընկալ մահով մը մեղմէ առ յաւէտ բաժնուեցաւ Գաղութիւս սիրուած եւ յարգուած գէմաբէքէն ՏԻԳՐԱՆ ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ, զաւակը Հ.Բ.Ը. Միութեան Հիմնադրիչներէն Մկրտիչ Անդրանիկեանի: Յուզարկաւորութիւնը կատարուեցաւ յաջորդ օրը՝ 16 հունիս, Ծարաթ օր, եւ մարմինը ամփոփուեցաւ Մարմինայի Ազգային Գերեզմանատան մէջ. Ողբացեալը դադափարսպաշա հայ մըն էր եւ շատ դնահատուած թանկարկն կարուեստագէտ մը: Իր հմտուից յօղուածները երաժշտութեան, մանաւանդ նկարչութեան մասին, մեծ հաճոյքով կը կրթողացուէին: Անդամ էր Հայ Արուեստի բարեկամներու Միութեան, որուն 1945ի մեծ ցուցահանդէսի կազմակերպութեան ժամանակ անդնահատելի աշխատակցութիւն մը ունեցաւ կազմակերպիչներուն հետ: Անդամ էր նոյնպէս Հայ Գեղարուեստասիրաց Միութեան, եւ ատենակետած քանիցս անոր վարչութեան:

Անդրանիկեան որքան հմուտ եւ փրնտրուած գրող, նոյնքան եւ սրամիտ հաճոյախոս մըն էր, եւ խանդավառ թատերասէր մը միանգամայն, որ իր օժանդակութեան լայն բաժինը բերած էր Գեղարուեստասիրացի թատերակա՞ն ձեռնարկներուն:

Հաւատարիմ անդամն էր նաեւ Հայաստան Բարեկարծակամի Ընդհանուր Միութեան: Երանի իրեն որ քաղցր յիշատակ մը թողած կը մեկնի այս անդաւոր աշխարհէն, բոլոր գինքը ճանչցողներու սիրոյն եւ յարգանքին մէջ:

Ս.

# ՀԱԼՊԻ ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԻ ՀԱՄԵՐԳԸ

Սփիւռքահայ հայրենակարօտ զանգը - ւածներու մօտ սզեպնդումի նւ հայրենասիրական վճիտ զգացումներով սողորոտելու գեղեցիկ պահեր կ'ստեղծեն համերգները: Իսկ երբ այդ մէկը կը մատուցուի գերա - գանց կատարողութեամբ, իւրաքանչիւր հայ մարդու սիրտ կը ճլուի անխառն հաճոյքով մը, զոր կարելի չէ բացատրել սոսկական խօսքերով, ալ կը զգացուի բիւրեղացած յոյզերով եւ կը նշուի որպէս հայրենասիրական ջերմ միջնորոտ: Այս էր պահը, զոր սրահ մը լեցուն խուններամ բազմութիւնը ասրեցաւ Հ.Բ.Ը. Միութեան սրահին մէջ: Արդարեւ, այդ օրը՝ 5 Յունիս 1962ի Երե - կոյեան երգչախումբը կը ներկայանար իր տարեկան համերգով, ղեկավարութեամբ սիրելի արուեստագէտ Ժիրայր Իսկէնեանի:

Մեթր Պարթաւճեան արաբերէն լեզուով կատարեց հանդիսութեան բացումը, իսկ Տիար Հ. Գույումճեան մայրենի լեզուով պատմականը բնաւ Հ.Ե.Ը. Սպենդիարեան երգչախումբին, որ բազմաթիւ դժուարութեանց յաղթահարելով, հասած էր այսօր - ւան իր փայլուն զիրքին: Բացման խօսքէն յետոյ վարագոյրը բացուեցաւ եւ զգեստներու եւ գոյներու կատարեալ ներդաշնակու - թեամբ հանրութեան ներկայացաւ վաթսուն հոգինոց երգչախումբը որուն յայտագիրը կազմուած էր երեք գլխաւոր մասերէ .

Առաջին մասը կը բաղկանար դժուարին կտորներէ, անուամբ Կոմիտասէ, Համբար - ձում Պէրպէրեանէ, Կարա-Մուրզայէ եւ

Արա Պարթեւեանէ, որոնք երգուեցան կա - տարեալ ապրումով եւ նախանձելի ճշգրտ - տութեամբ:

Յայտագրին երկրորդ մասը կազմուած էր հայերէն եւ արաբերէն ժողովրդային երգերէ: Հետաքրքրական նորութիւն էին «Հինգալա» եւ «Մոսկովեան Գիշերները» արաբերէն լեզուով: Թաթու Ալթունեանի «Այդիւր Ալընա» երգը մեծ յաջողութիւն մըն էր երգչախումբին եւ սոլիստ Օր. Անա - հիտ Պողոսեանի համար: Ա. Պատմապրեանի «Սարի Այլլիկ», Կ. Բակարեանի «Գարուն» եւ Մ. Մազմանեանի «Կարմիր Վարդ» ու «Ձախջի դոնով» երգերով փակուեցաւ յոյ - սագրի երկրորդ մասը: Յայտագրին եր - րորդ մասը նոյնպէս հայկական եւ արաբա - կան ժողովրդային երգերէ կազմուած էր: Թ. Ալթունեանի «Կինոյ Երգը» երգուեցաւ արաբերէն լեզուով: Պր. Միհրան Մուրա - չարեան (պարթիթա) յաջողութեամբ կատա - րեց մենեջիլի մասը, իսկ «Տիւլ ալունէք» երգը, որ երկու անգամ կրկնուեցաւ ժողո - վուրդին փափաքին վրայ, յաջողութեան պատկեր եղան մենեջիլներ՝ Պր. Պետրոս Գնանճեանի եւ Օր. Մարիա Համբարձում - եանի համար: Ապա յաջորդաբար երգուե - ցան՝ «Մըտիկ Մամուլ», «Մեքենալարի եր - ց»ը «Յանուն Առատութեան» եւ վերջապէս Թաթու Ալթունեանի «Բառասնամեակի եր - ց»ը որ գլխաւորուեցաւ բուն ծափահա - թեամբ եւ կրկնուեցաւ:

Երգչախումբը այս տարի ներկայացաւ աւելի քան շնորհալի եւ մարդուած, շնորհիւ իրումբին ղեկավար Տիար Իսկէնեանի ե - ուանդուն աշխատանքին որ երգչախումբը բարձունքէ բարձունք հասցնելու համար ճիղ եւ ժամանակ չի խնայեր: Համերգը կրկնուեցաւ ժողովրդային պահանջները վը - րայ:

Գահիրէի ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ օրկան

«Տեղեկասու»ն կը հրատարակուի ամիսը անգամ մը.

— Թղթակցութեանց, դրամական նուէրներու, գիրքերու,  
թերթերու եւ հանդէսներու առաքումները կասարել  
խմբագրութեանս հասցէին՝

*Խմբագրութիւն «Տեղեկասու» ի*

15, Էմաս էլ Տին փողոց.

Նամակասուփ 717, Գահիրէ — Հեռախօս 55636

Rédaction «Déghégaou»

15, Rue Emad El Dine

B.P. 717, — Le Caire — R. A. U.

---

Այս հրատարակութիւնը վճարովի չէ  
Շնորհակալութեամբ կ'ընդունինք նուէրներ, մեր այս  
ձեռնարկը առելի նոյս եւ շահեկան ընծայելու համար:

— Ստանալու համար դիմել խմբագրութեան —

---

مطبعة أرجو — وس ٢٠ شارع زكريا أحمد (جلال سابقاً) القاهرة

Printed in Egypt by "ARGUS" PRESS, 10, Sharia Zakaria Ahmed (Ex Galal) Cairo. U. A. R.